Հայաստանի Հանրապետություն

Լոռու մարզ

Լեռնանցքի համայնքապետարան

Հասցե՝1810 , Լոռու մարզ,
գ. Լեռնանցք 8 փ. շենք թիվ 6/4
հեռ. 093 – 32 – 22 - 39
E-mail: lernancq@mail.ru

N0LՄ/LՀ025/382

«30» 12 2020 թ.

ՀՀ Լոռու մարզպետ

պարոն Ա. Խաչատրյանին

Հարգելի պարոն Ա. Խաչատրյան

Ձեզ եմ ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի ավագանու թիվ 42-Ա, 43-Ա, 44-Ա, 45-Ն, 46-Ն, 47-Ն, 48-Ն, 49-Ա և 50 որոշումները:

Առդիր՝ 44 թերթ

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«24» 12 2020թ. հեռ. 093-32-22-39

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 42-Ա

ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24 -Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 18-րդ հոդվածներով, Լեռնանցք համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Լեռնանցք համայնքի ավագանու 2020թ. դեկտեմբերի 24-ի արտահերթ նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

Լեռնանցք համայնքի ավագանու 2020թ-ի տեկտեմբերի 24-ի արտահերթ նիստի

1. ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի գույքագրման ցանկում փոփոխություն կատարելու մասին
2. Լեռնանցք համայնքի 2021 թվականի համայնքային սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին
3. ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի 2021 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր սահմանելու մասին
4. Լեռնանցքի համայնքապետարանի քաղաքական, հայեցողական, աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
5. ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի ավագանու 2019թ. դեկտեմբերի 23-ի << Լեռնանցք համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 49-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
6. Լեռնանցք համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին:
7. ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

8. ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի ղեկավարի 26.11.2020թ.-ի թիվ 55 և 22.12.2020թ-ի թիվ 58 որոշումները՝ սոցիալական օգնություն, ի գիտություն ընդունելու մասին

Ավագանու անդամներ՝	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Առաքելյան Ա.			
Չախոյան Ա.			
Վարդանյան Ս.			
Վիրաբյան Կ.			
Օհանյան Յ.			

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«24» 12 2020թ.

Հասցե՝ 1810 , Լոռու մարզ,
գ.Լեռնանցք 8 փ. Շենք 6/4
հեռ. 093 – 32 – 22 – 39
E-mail: lernancq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 43-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՑԱՆԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով.

Որոշում է՝

ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի ավագանու 22.01.2020 թվականի «Համայնքային սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին» թիվ 04-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ հիմնական միջոց հանդիսացող գույքի ցանկում ավելացնել՝117 հատ հենասյուն էլեկտրական լամպերով, 5 հատ լուսատու էլեկտրական լամպերով՝ 11821168 (տասնմեկ մլն ութ հարյուր քսանմեկ հազար մեկ հարյուր վաթսունութ) ՀՀ դրամ:

Ավագանու անդամներ՝ Կողմ Դեմ Ձեռնպահ

Առաքելյան Ա.

Չախոյան Ա.

Վարդանյան Ս.

Վիրաբյան Կ.

Օհանյան Յ.

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«24» 12 2020 թ.

Հասցե՝ 1810 , Լոռու մարզ,
գ.Լեռնանցք 8 փ. շենք թիվ 6/4
հեռ. 093 – 32 – 22 – 39
E-mail: lernancq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 44-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետով՝

Ավագանին որոշեց.

1. Հաստատել Լոռու մարզի Լեռնանցք համայնքի ղեկավարի հրամանով կազմված սեփականության ամենամյա գույքագրման հանձնաժողովի կողմից անցկացված ամենամյա գույքագրման արդյունքում կազմված փաստաթղթերը:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամներ՝	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Առաքելյան Ա.			
Չախոյան Ա.			
Վարդանյան Ս.			
Վիրաբյան Կ.			
Օհանյան Յ.			

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

« 24 » 12 2020թ.

Հասցե՝ 1810 , Լոռու մարզ,
գ.Լեռնանցք 8 փ. շենք թիվ 6/4
հեռ. 093 – 32 – 22 – 39
E-mail: lernancq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 45-Ն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021 Թ. ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածներով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով, 3-րդ հոդվածի 3-րդ կետով՝

Լեռնանցք համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնանցք գյուղական համայնքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:

3. Ուժը կորցրած ճանաչել Լեռնանցք համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնանցք գյուղական համայնքում 2020 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 46-Ն որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Առաքելյան Ա.			
Չախոյան Ա.			
Վարդանյան Ս.			
Վիրաբյան Կ.			
Օհանյան Յ.			

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

Հավելված
Համայնքի ավագանու 24.12.2020թ-ի թիվ 45-Ն որոշում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Տեղական տուրքեր

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ չորս հազար հինգ հարյուր դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ ինը հազար դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ ինը հարյուր դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ ինը հարյուր դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **վաթսուն հազար դրամ.**

6) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երկու հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար հարյուր դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար հարյուր դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար հարյուր դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար հարյուր դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար հարյուր դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հազար հինգ հարյուր դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար հարյուր դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար հարյուր դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար հարյուր դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար հարյուր դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար հարյուր դրամ.

7) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

8) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ հինգ հազար դրամ,

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ,

դ. խաղատների համար՝ հինգ հարյուր հազար դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ հարյուր հիսուն հազար դրամ.

9) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար հարյուր դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար հինգ հարյուր դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասը հազար հարյուր դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար հարյուր դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար հարյուր դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսուն հազար հարյուր դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար հարյուր դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար հարյուր դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար հարյուր դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար հարյուր դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար հարյուր դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար հարյուր դրամ.

10) ավազանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար՝ երեք հարյուր յոթանասունհինգ դրամ

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար՝ հարյուր հիսուն դրամ.

11)Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **հարյուր հազար դրամ.**

12) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տասը հազար դրամ.

Տեղական վճարներ

1. Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տասը հազար դրամ.

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ.

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տաս հազար դրամ.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երկու հազար դրամ.

7) <<Սառնաղբյուր>> և <<Պալուղարա>> խմելու ջրագծից օգտվող ընտանիքներից՝ տեղական վճար մեկ ամսվա համար սահմանել մեկ հազար դրամ:

8)համայնքի կողմից աղբահանություն կազմակերպելու վճար սահմանել մեկ անձի համար ամսեկան ինսուն դրամ:

9)համայնքը սպասարկող անասնաբույժի կողմից տրված տեղեկանքի համար սահմանել երկու հարյուր դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

« 24 » 12 2020 թ.

Հասցե՝ 1810 , Լոռու մարզ,
գ.Լեռնանցք 8 փ. շենք 6/4
հեռ. 093 – 32 – 22 – 39
E-mail: lernancq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 46-Ն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆՑՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28–րդ կետերով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 23-րդ, 28-րդ և 37-րդ հոդվածներով համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Լեռնանցքի համայնքապետարանի քաղաքական, հայեցողական, աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:
2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնանցք համայնքի ավագանու 2020թ-ի հունվարի 22-ի թիվ 02-Ա որոշումը:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2021թ-ի հունվարի 1-ից:

Ավագանու անդամներ՝	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Առաքելյան Ա.			
Չախոյան Ա.			
Վարդանյան Ս.			
Վիրաբյան Կ.			
Օհանյան Յ.			

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

Հաստատված է
Լեռնանցք գյուղական համայնքի ավագանու
24 12 2020թ. թիվ 46-Հ որոշմամբ

ՀՀ Լոռու մարզի Լեռնանցքի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 9

Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորների քանակը	Պաշտոնական դրույքաչափը (հազար դրամ)	Ամսական աշխատավարձի ֆոնդը (հազար դրամ)	Տարեկան աշխատավարձի ֆոնդը (հազար դրամ)
Քաղաքական և հայեցողական պաշտոններ				
Համայնքի ղեկավար	1	340.0	340.0	4080.0
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	180.0	180.0	2160.0
Համայնքային ծառայության պաշտոններ				
Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար	1	165.0	165.0	1980.0
Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ	1	160.0	160.0	1920.0
Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ	2	160.0	160.0	1920.0
Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ				
Վարորդ	1	80.0	80.0	960.0
Ջրամատակարարման կարգավորող	1	124.0	124.0	744.0
Հավաքարար	0.5	90.0	45.0	540.0
Ընդամենը	8.5	1299.0	1254.0	14304.0

Համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«24» 12 2020թ.

Հասցե՝ 1810 , Լոռու մարզ,
գ.Լեռնանցք 8 փ. շենք թիվ 6/4
հեռ. 093 – 32 – 22 – 39
E-mail: lernancq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 47- Ն

ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23 -Ի <<ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 49 -Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով և 34-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Լեռնանցք համայնքի ավագանին որոշում է.

1. Լեռնանցք համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի << Լեռնանցք համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 49-Ն որոշման մեջ կատարել հոդվածի փոփոխություն՝

ա/ Բյուջեի ֆոնդային մասի 04/05/01 դասակարգում /փողոցների պահպանում/ պակասեցնել 300000 (երեք հարյուր հազար) դրամով:

բ/ Խմելու ջրի մատակարարման ծառայության հոդվածը /ջրահեռացման համակարգի կառուցման և հենապատի վերակառուցման աշխատանքներ (06/03/01 դասակարգում)/ ավելացնել 300000 (երեք հարյուր հազար) դրամով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝ Կողմ Դեմ Ձեռնպահ

Առաքելյան Ա.

Չախոյան Ա.

Վարդանյան Ս.

Վիրաբյան Կ.

Օհանյան Յ.

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«24» 12 2020 թ.

Հասցե՝ 1810 , Լոռու մարզ,
գ.Լեռնանցք 8 փ. շենք 6/4
հեռ. 093 – 32 – 22 – 39
E-mail: lernancq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 48-Ն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ 1-ին մասի 3-րդ կետով և 55-րդ հոդվածներով, «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի 31-րդ և 32-րդ հոդվածներով՝

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի 2021 թվականի բյուջեն՝ համաձայն 1-6 հատվածների:

2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Առաքելյան Ա.			
Չախոյան Ա.			
Վարդանյան Ս.			
Վիրաբյան Կ.			
Օհանյան Յ.			

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«24» 12 2020թ.

Հասցե՝ 1810 , Լոռու մարզ,
գ.Լեռնանցք 8 փ. շենք թիվ 6/4

հեռ. 093 – 32 – 22 – 39
E-mail: lernancq@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 49 - Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 07-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնանցք համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 14-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Լեռնանցք համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.

2.Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Առաքելյան Ա.			
Չախոյան Ա.			
Վարդանյան Ս.			
Վիրաբյան Կ.			
Օհանյան Յ.			

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան

Հավելված 1
ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի ավագանու
2020 թվականի դեկտեմբերի 24-ի N 49-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Թորոսյան Մարիամ Հ. ---- 25000 (քսանհինգ հազար) դրամ / ուս. վճար/.
2. Գրիգորյան Հասմիկ Մ. ---- 25000 (քսանհինգ հազար) դրամ / ուս. վճար /.
3. Առաքելյան Երվանդ Մ. ---- 25000 (քսանհինգ հազար) դրամ / ուս. վճար /.
4. Մխիթարյան Բավական Վ. ---- 25000 (քսանհինգ հազար) դրամ / ուս. վճար /.
5. Եղիազարյան Էմմա Ա. ---- 25000 (քսանհինգ հազար) դրամ / սոց օգնություն /.
6. Նիգոյան Մարինե Ռ. ---- 25000 (քսանհինգ հազար) դրամ / սոց օգնություն /.
7. Վիրաբյան Լյովա Ա. ---- 25000 (քսանհինգ հազար) դրամ / սոց օգնություն /.
8. Աջամյան Մարիամ Ս. ---- 10000 (տաս հազար) դրամ / սոց օգնություն /.
9. Մակարյան Նինան Ճ. ---- 25000 (քսանհինգ հազար) դրամ / սոց օգնություն /.
10. Զախոյան Լևոն Ռ. ---- 20000 (քսան հազար) դրամ / սոց օգնություն /.

Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Գ. Վարդանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հասցե՝ 1810 , Լոռու մարզ,
գ.Լեռնանցք 8 փ. շենք թիվ 6/4
հեռ. 093-32-22-39
E-mail: lernancq@mail.ru

« 24 » 12 2020թ.

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 50

ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԵՐԵԽԱՅԻ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ՀԱՐԱԶԱՏԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի ավագանու 2017 թ-ի հունիսի 07-ի <<<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնանցք համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը հաստատելու մասին>> թիվ 14-Ա որոշմամբ ընդունված կարգի 14-րդ կետով համայնքի ավագանին՝

ՈՐՈՇՈՒՄ Է.

Ընդունել ի գիտություն Լեռնանցք համայնքի ղեկավարի 26.11.2020թ.-ի թիվ 55 և 22.12.2020թ-ի թիվ 58 որոշումները համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին /հարազատին կորցրածի համար/ Վարդանյան Սերյոժա 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ, Նիկողոսյան Գագիկ 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ, /երեխայի ծննդյան/ Եղիազարյան Ռոզա 20000 (քսան հազար), Ղազարյան Ալվարդ 20000 (քսան հազար), Մացակյան Արկադի 20000 (քսան հազար) և Մելիքսեթյան Մելինե 20000 (քսան հազար), /հարազատին կորցրածի համար/ Բաղալյան Արսեն 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ հատկացնելու մասին համայնքի ղեկավարի հաղորդումները:

Ավագանու անդամներ՝	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Առաքելյան Ա.			
Չախոյան Ա.			
Վարդանյան Ս.			
Վիրաբյան Կ.			
Օհանյան Յ.			

Լեռնանցք համայնքի ղեկավար՝ Լ. Աբգարյան